

Փետրվար, 2008 թ. թիվ 2-3 (4542-4543)

ՆՆ նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը այցելեց Սպիտակ



Փետրվարի 7-ին Սպիտակ այցելեց ՀՀ վարչապետ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը: Վարչապետը նախ այցելեց Սպիտակի Սուրբ Գրիգորյան եկեղեցի, որից հետո քաղաքային հրապարակում կայացավ նրա հանդիպումը ընտրողների հետ: Սինչ թեկնածուի էլույթը՝ սպիտակցիներին ուրախ տրամադրություն հաղորդեցին հանրահայտ երգիչներ Արսեն Գրիգորյանը, Հասմիկ Կարապետյանը, Լիլիթ Կարապետյանը, Սամվել Գրիգորյանը, Արամեն, Ար-

մինկան և ուրիշներ: Ներկաների առջև հանդես եկավ Ս. Սարգսյանը «ես այսօր չեմ ուզում մանրամասնել մեր արձանագրած հաջողությունները, դուք դա արդեն գիտեք: Մեր խնդիրներն ավարտված չեն: Ինչպես գիտեք, այս տարի երկրաշարժի 20-րդ տարելիցն է. հանրապետության նախագահի հրամանագրով ստեղծվել է հանձնաժողով, որ ուսումնասիրել է աղետի գոտում Լոռու և Շիրակի մարզերում առկա հիմնահիմքերը: Ներկաներից շատերն արդեն իրազեկ կլինեն այն բազմաթիվ ծրագրերին, որ արդեն հաստատվել են և պատրաստվում ենք առաջիկայում իրականացնել: 17 մլրդ դրամի ներդրումներ կկատարվեն երկու մարզերում՝ չհաշված բնակարանաշինության ծրագիրը»,- ասաց Սերժ Սարգսյանը: Իսկ բնակարանաշինության հարցի հետ կապված՝ վարչապետը վստահեցրեց, որ մինչև մարտ ամիսը երկրաշարժից անօթևան յուրաքանչյուր ընտանիք ստույգ կհամար, թե երբ է ստանալու իր հասանելի բնակարանը, իսկ 4 տարվա ընթացքում,

վարչապետի խոսքով ամբողջովին լուծվելու է այս խնդիրը: «Սա «Առաջ, Հայաստան» ծրագրի մի փոքրիկ մասն է միայն: Մենք ձեզ խոստանում ենք բարեկեցիկ կյանք: Միասին շարժվենք դեպի նոր ու բարգավաճ Հայաստան»,- ասաց Ս.Սարգսյանը: Ս. Սարգսյանը բոլոր հանդիպումների ժամանակ խոսում է հանուն նոր, ավելի բարեկեցիկ Հայաստանի և ընդդեմ բոլոր հոռի երևույթների, որ կան մեր հասարակության մեջ: Նա վստահեցրեց, որ պայքարելու է նման երևույթների դեմ, բայց հասարակության օժանդակությամբ, առանց հասարակական աջակցության անհնար կլինի արդար հասարակություն կառուցել, պայքարել կաշառակերության դեմ, կառուցել ժամանակակից ժողովրդավարական պետություն: Մենք չենք կարող խոստանալ, թե վաղը հրաշքով 10, 20, 30 անգամ բարձրացնելու ենք թոշակները, 100 անգամ ավելացնելու ենք հաշմանդամներին տրվող թոշակներն ու նպաստները: Մենք խոստանում ենք այն, ինչ ի վիճակի ենք անել և մեր

խոստումների համար պատասխանատու ենք: Ուրիշները մեծ-մեծ թվեր են խոստանում, որպեսզի վաղը, մյուս օրը մամուլում հանդես գան և ասեն՝ մեզ չընտրեցիք և չկարողացանք 20 անգամ բարձրացնել թոշակները,- ասաց Ս.Սարգսյանը: Նրա խոսքերով՝ բոլորը պետք է գիտակցեն, որ մեր երկրի ապագան կախված է անցկացվելիք ընտրությունների որակից. եթե չկարողանանք անցկացնել արդար ընտրություններ, եթե երկրի նախագահը չընտրվի արդար ընտրություններով, նա ի վիճակի չի լինելու լավ գործեր կատարել Հայաստանի համար, արդար լինել, կենտրոնանալ երկրի խնդիրների լուծման վրա: Այնուհետև թեկնածուն զրուցեց քաղաքացիների հետ, պատասխանեց նրանց հարցերին: Նոր հաջակապ, Ղուրսալի, Քարածոր համայնքների ընտրողների հետ թեկնածուն կարճատև հանդիպում ունեցավ մայրուղուն հարակից տարածքում:

Սեփական լրատվություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՀՎԿՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՅ «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» ՄԵԴԱՈՎ

Յուրաքանչյուր տեղացու առաջընթաց սպիտակցի ընդունում է մեծ խանդավառությամբ ու հպարտությամբ: Հովհաննես Սահակյանն էլ իր ժողովրդի արժանի զավակն է, իր գործունեության ընթացքում միշտ կապված է եղել իր հայրենի բնօրրանին, իր քայլերով նպաստել հայրենի ժողովրդի բարօրությանը: Հովհաննես Սահակյանը, չնայած իր երիտասարդ տարիքին, անցել է անբախի որ բովանդակալից ուղի: Ծնվել է 1977թ. Սպիտակում, թիվ 8 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Հայոց ազգային բանակում ծառայելուց հե-

տո աշխատել է բնապահպանության նախարարությունում, հարկային պետական ծառայությունում, կենսաթոշակային պետական հիմնադրամում, նախ՝ որպես աշխատակազմի ղոկավարի տեղակալ, այնուհետև՝ վերահսկողության և մոնիտորինգի վարչության պետ: Այժմ ՀՀ աշխատանքի և սոցիալական ծառայությունների նախարարության կենսաթոշակային պետական ծառայության պետի տեղակալն է: Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ՀՀԿ Սպիտակի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ: 2008թ. հունվարի 23-ին Հովհաննես Սիշայի Սահակյանը հայոց բա-

նակի օրվան ընդառաջ պետական-քաղաքական ակտիվ գործունեության համար ՀՀ պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանի հրամանով պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով: Այն, որ ըստ արժանավույն են գնահատվում երիտասարդ ուժերի ձգտումներն ու ջանքերը, ողջունելի է: Նման պարգևները ոգևորիչ են երիտասարդների համար՝ ավելի ջերմությամբ ու սիրով մվիրվելու աշխատանքին, ծառայելու ժողովրդին, իրենց ուժերը ներդնելու երկրի գարգացման գործին: Հովհաննես Սահակյանը այս ամենին հասել է իր աշխատասիրության, համառության ու նվիրվածության շնորհիվ և դեռ շատ նորանոր բարձունքներ գրա-



վելու ձգտումներ ունի: Ծնորհավորենք երիտասարդ քաղաքական գործչին և մաղթենք նրան նորանոր հաջողություններ ու զարգացողական հաղթանակներ. թող այս պարգևը լինի շեղ այն ամենի, ինչին նա ձգտում է: «Լուսարձակ»

ԾՆՆԴՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԹՔ Արաքս Ափուջանյանին - 6տ.



Արաքս, փոքրիկ աղջնակ, Մեր սիրտ, հոգի ու մեր կյանք, Մեր տան փոքրիկ արեգակ, Քեզ երջանիկ ու մեծ կյանք: Մեր խելոք աղջիկ՝ և քնքուշ, և հեզ, Ծննդյան առթիվ շնորհավորում ենք քեզ:

Ծնորհավորում են պապիկը, տատիկները, ծնողները, հորեղբայրները և բոլոր հարազատները

«Լուսարձակը»

շնորհակալություն է հայտնում Ղուրսալի և Սարամեջի դպրոցների տնօրինություններին՝ թերթի 2008 թ.-ի բաժանորդագրության գումարը մուծելու համար:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԶՐՈՐՆՆՅԱՑ ԽԱԶՔՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարցազրույց ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐԴ Տ. ՍԵՊՈՒՅ ԵՊՍ. ԶՈՒՆՅԱԼԻ ԴԵՏ

- Սիրազան Հայր, ինչպե՞ս կրճուրեցրեք Հայ Առաքելական եկեղեցու Ջրօրինյաց խաչքավորությունը: Հայոց մեջ ի՞նչ ավանդություններ կան՝ կապված խաչքավորության հետ: - Խաչքավորությունը վաղ քրիստոնեական ժամանակներից բանավոր ավանդությամբ մեզ հասած և օրինականացված պատվո պաշտոն է կամ հանգամանք, որ ընտրվում է Սուրբ Ծննդյան տոնի Ջրօրինյաց արարողության առիթով մեկ տարվա համար: Սակայն խաչքավորի խնդրանքին ընդառաջ, համաձայն իր ուխտին, առաջնորդի հավանությանը խաչքավորությունը երբեմն նաև կարող է հաջորդաբար առաջիկա տարիներին կրկնվել: Ի պատիվ խաչքավորի՝ Ջրօրինյաց արարողության ավարտին հաջորդաբար խաչքավորի տուն է տարվում, և առաջին տնօրինեքը կատարվում է խաչքավորի տանը, ապա խաչը թողնվում է այնտեղ մինչև Անվանակոչություն (ութ օր): Խաչը կարող է թողնվել նրա տանը մինչև Սուրբ Ջատկական նախատոները: Ի դեպ, համաձայն ավանդության, խաչքավորին մոտ կանգնած բարեկամները, հարևանները, բարեպաշտ հավատացյալները գնում են խաչքավորի տուն՝ խաչը համբուրելու և խաչքավորին շնորհա-

վորելու ստանձնած հանձնառության համար: - Ո՞վ կարող է ստանձնել խաչքավորության պատվավոր պաշտոնը և ինչպե՞ս: - Խաչքավորության պարտականությունը կարող է ստանձնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակ հանդիսացող արական սեռի յուրաքանչյուր ոք՝ անկախ մասնագիտությունից: Թե՛ մակալ առաջնորդները կամ ծխատեր հովիվները տարվա խաչքավորներին ընտրում են տվյալ համայնքում հայտնի բարեպաշտ, աստվածավախ, ազնիվ, սիրված ու գործունյա անձանցից: Համաձայն ավանդության՝ նախախորհրդային շրջանում առաջնորդների կամ ծխատեր քահանաների կողմից նույն տարում մեկից ավելի խաչքավորության հավակնորդների միջև կատարվել է ընտրություն կամ մրցույթ, թե ով առավել հնարավորությամբ և ջանասիրությամբ կարող է իր նյութական ու բարոյական մասնակցությունը բերել տվյալ եկեղեցու շինության, նորոգության, կահավորման, քարոզչության, ծխական դպրոցի, եթե կա՝ մանուկների ճամբարի գործունեության ծախսերը հոգալու, համայնքի

աղքատ խավին օգնելու համար: Խաչքավորության համար երբեք նախապայման չէ նյութական աջակցությունը: Բացառիկ սրբակենցաղ ու բարոյական բարձր գիտակցության տեր բարեպաշտ, քրիստոնեական վարդապետությամբ կենցաղա-

վարող արժանավոր անձը փնտրված և առավել ընդունելի է: - Ի՞նչ պարտավորություններ է ստանձնում Ջրօրինյաց խաչքավորը և ի՞նչ՞ով է պայմանավորված նրա նվիրումը եկեղեցուն: շարունակությունը 8-րդ էջում

ՀԱՄԱՐՈՒՄ	
ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ	ԷՋ 2
ՍՊԻՏԱԿՅԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԾԸ ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ	ԷՋ 3
ԳՆԱՅԱՏՎԵՑ ՎԱՍՏԱԿԸ	ԷՋ 3
ՀԱՅԱՍՏԱՆ ՏԱՏԻ ԴԾՎԱՐ ՀԱՂՈՒՆԱԿԸ	ԷՋ 3
ԳԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ	ԷՋ 4



ՄԵՐ ՆԱՅԻՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՏԱԳՈՎՆԵՐԸ



Наш вибір
НАША УКРАЇНА
Овсеп Мікртчян



րով անցկացվեց գեղեցկության մրցույթ՝ «Կրիվոյ Ռոգի միսս հայուհի» անվանակարգով, որին մասնակցեցին 8 հրաշալի հայուհիներ: Որոշ մասնակիցներ, չնայած դժվարությամբ էին խոսում հայերեն, սակայն մեծ վարպետությամբ էին երգում հայերեն և կատարում հեզաձևյուն ու գեղեցիկ հայկական պարեր: Մրցույթում հաղթեց իրավաբանական ակադեմիայի ուսանողուհի Մարինե Գրիգորյանը: Նա հանդիսատեսին հմայեց ոչ միայն իր գեղեցիկ արտաքին տեսքով, այլ նաև հրաշալի հայկական պարերի կատարմամբ և իր հեղինակած բանաստեղծությունների արտասանությամբ, որի շնորհիվ նա շահեց առաջին մրցանակը և արժանացավ խրախուսամքի:

պատգամավոր է: Սկսած 1997թ. Յուլսեփի Մկրտչյանը քաղաքի հայ համայնքի ղեկավարն է, իսկ 2002թ. Ուկրաինայի հայերի միության փոխնախագահն է: Նա համարվում է քաղաքի 100 լավագույն գործարարներից մեկը:

Նրա կազմակերպչական ու նյութական աջակցության շնորհիվ 2007թ. փետրվարի 17-ին Կրիվոյ Ռոգի հայկական համայնքի միասնական ուժերով ստեղծվեց հայկական կիրակնօրյա դպրոց, որը կրում է Գրիգոր Լուսավորչի անունը: Դրանում ընդգրկվեցին ներկայացուցիչները, որպեսզի մեծապատասխանությամբ դարձնեն իրենց սեփականությունը: Դպրոցում այժմ ընդգրկված են 7-25 տարեկան 120 հայ ունկնդիրներ: 3. Մկրտչյանի անձնամասնիջական նախաձեռնությամբ ու միջոցներով բոլոր ունկնդիրները բավարարվել են անհրաժեշտ դասագրքերով, առաջին հերթին Լյբբենարաններով, որոնք բերվել էին Հայաստանից:

Կիրակնօրյա դպրոցում համայնքի ղեկավարն իր շուրջն է համայնքից հայ մանկավարժներին. դպրոցի տնօրենն է Արմինե Ամիրխանյանը, որը միաժամանակ երեխաներին սովորեցնում է հայ պարարվեստի նրբությունները, հայոց լեզվի դասավանդումը իրականացնում են Սրբուհի Թունայանն ու Ջերմինե Ավագյանը, հայոց պատմություն են դասավանդում Անի Քաղայանն ու Հասմիկ Գևորգյանը: Վերջիններին շնորհիվ դպրոցի ունկնդիրները ուսումնասիրում են հայոց գիրը ու գրականությունը, պատմությունը, անցյալ ու ներկան:

Հայ համայնքը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում քաղաքի և Ուկրաինայի մշակութային կյանքին. մշտապես գործում է հայ երիտասարդների պարի խումբը, որը հաջողությամբ մասնակցեց 2007թ. մայիսին Կիևում անցկացված համաուկրաինական փառատոնին՝ նվիրված հայ մշակույթին:

Համայնքում պարբերաբար անց են կացվում բազմազան միջոցառումներ: Այսպես՝ հունիսի 4-ին Կրիվոյ Ռոգի «հայ երիտասարդական միության» ջանքե-

Մփյուռքը մեր ժողովրդի կենսակերպի դրսևորումներինց մեկն է, որ ձևավորվել է անցած դարերի, տասնամյակների ընթացքում և այսօր համարվում է Հայաստան-Սփյուռք-Արցախ շրջափյունի մի օղակը:

Մեր ժողովրդի մի զգալի հատվածը ժամանակի ընթացքում այլալայլ պատճառներով թողել է հայրենիքն ու ապաստան գտել արտերկրում՝ փրկության, ապրելու, ընտանիքի հոգսերն ու կարիքները հոգալու, մի խոսքով գոյատևելու համար: Հաճախ էլ մարդկանց այլ երկրներ է տարել ուսման ու աշխատանքի, ձեռնբեռեցություն մղումը: Այդ տեսակետից մերօրյա սփյուռքի մի փոքրիկ հատված է ձևավորվել Ուկրաինայի Հանրապետության Դնեպրոպետրովսկի մարզի Կրիվոյ Ռոգ քաղաքում, ուր ընդգրկված են ավելի քան 4 հազար հայեր: Համեմատաբար վերջերս ձևավորված այս համայնքը լծված է քաղաքի համընդհանուր կյանքին, փորձում է ակտիվ ու ստեղծագործ կյանքից բացի պահպանել նաև իր հայեցի կեցվածքը, լեզուն ու գիրը: Նրանցից իր հայրենամիտ գործունեությամբ աչքի է ընկնում Հովսեփ Գուրգենի Մկրտչյանը, որի կազմակերպչական ջանքերի շնորհիվ ձևավորվել է մի կուռ ու ամբողջական հայ համայնք:

Արժե ներկայացնել Հովսեփի Մկրտչյանի մասին կենսագրական որոշ տեղեկություններ, որոնք առավել անբողջական կդարձնեն գործունեության այն շրջանակը, որը ծավալել է հայ գործարարը:

Նա ծնվել է 1951թ. Երևանում, ծառայողի ընտանիքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանում, ապա սովորել է Մոսկվայի տնտեսագիտական ինստիտուտում և Զսպորոժիտի պետ-համալսարանի ֆինանսներ: 1973թ. եկել է Կրիվոյ Ռոգ քաղաքը սկզբում զբաղվել է բնակչությանը սննդամթերքների մատակարարման հարցերով: Այնուհետև՝ 1992 թ., զբաղվել է անհատ ձեռնբեռեցությամբ: 1996-2007թթ. Կրիվոյ Ռոգի քաղաքային խորհրդի

ՌՈՍՏՈՎՅԻ ՄԱՄԲԻՍՏԸ ԱՐՉԱՆ Է ԿԱՌՈՒՅԵԼ ԶՈՆՎԱԾՆԵՐԻ ՆԻՇԱՏԱԿԻՆ

Մեր քաղաքում սամբոյի (սպորտային և մարտական) մարզային ֆեդերացիան ձևավորվել է 2 տարի առաջ: Այդ օրվանից ի վեր Ռոստովի շրջանի պետական մարզիչին՝ Հապետ Վարդանյանին հաջողվել է բավականին բան անել: Օրինակ, վերջերս Ռոստովում իր դժները բացեց սամբոյի մասնագիտացված առաջին ակումբը: Դրա ստեղծման հեղինակ 38-ամյա Վարդանյանը սպորտակումբը կոչեց «Ռոսարմ»՝ ի պատիվ ռուս-հայկական ընկերության: Նոր դահլիճում մենք զարգացնելու ենք սպորտային և մարտական սամբոն: Մեծ օգնություն ցուցաբերեց մարզի սպորտի վարչությունը: Ռոստովի մարզի հունահռոմեական ըմբշամարտի ֆեդերացիան՝ Ռաֆայել Սամուրդաշևի գլխավորությամբ, ինչպես նաև սամբոյի սիրահարներ - Վ.Ս. Սպիրովսկին, Ա.Ս. Կասինը, Ա.Ռ. Սահակյանը, - ասում է Հ. Վարդանյանը:

Նրա ակումբը ստեղծվել է երկու տարի առաջ: 500 մ² վրա տեղավորվում են 2 մոդ մեծ գորգեր, մի քանի մարզագույք, հարմարավետ լոգարաններ, սենյակներ՝ մարզիչների և մարզիկների համար: «Ռոսարմ»-ում արդեն մարզվում են մոտ 100 սամբիստեր՝ և՛ աղջիկներ, և՛ տղաներ, որոնց հետ աշխատում են բարձր որակավորում ունեցող մարզիչներ՝ Նիկոլայ Ռևակինը, Օլեգ Զաբինը, Ադան Բզեգյանը: Եվ իհարկե, Ռոստովի մարզում միակ միջազգային կարգի սպորտի վարպետ Հապետ Վարդանյանը:

«Ռոսարմ»-ը սերտ համագործակցում է «Լոկոմոտիվ 19» մանկապատանեկան սպորտդպրոցի Օլիմպիական ռեզերվի հետ, որտեղ բացվել է սամբոյի բաժանմունք: Աղջիկներն ու տղաները կարող են անվճար մարզվել այդ սեկցիայում: Այսօր մարզում սամբոն համայնքել է շուրջ 500 մարդ: Մեր քաղաքում, բացի մոդ ակումբից, սամբոյով են զբաղվում նաև Ռուսաստանի ՆԳՆ-ի Ռոստովի իրավաբանական ինստիտուտում: Ամեն տարի կազմակերպվում են մարզային առաջնություններ, բազմաթիվ մրցույթներ:

- Մենք կոչ ենք անում երիտասարդներին ակտիվ զբաղվել սպորտով և առաջարկում ենք նրանց զբաղվել սամբոյով, որպես այլընտրանք խմիչքին և թմրանյութին, - ասում է Հ. Վարդանյանը:

Շատ հավանական է, որ մոտ ապագայում Ռոստովի սամբիստները կմասնակցեն Օլիմպիական խաղերին: Ասում են՝ 1980թ., սամբոն հնարավորություն ուներ դառնալու օլիմպիական սպորտաձև: Սակայն Բրեժնևը լայն ժեստ արեց՝ ի օգուտ հնդիկ ընկերների և անձամբ հնդիկա զանդիին և սամբոյի փոխարեն Օլիմպիադա մտցրեց խոսի հոկեյը:

Յավալի է, որ Օլիմպիադայի ծրագրում ընդգրկված են մեծապայքարի մի քանի ձևեր, իսկ մինչև օրս ռուսական ազգային հպարտությունը ընդգրկված չի այդ ծրագրում: Չնայած ՆԳՆ-ի աշխատակիցների նախապատրաստումը երկար տարիներ անցկացվում է ինքնապաշտպանություն առանց զենքի ծրագրով՝ Սամբո: Սակայն նկատվում է որոշակի առաջնադասում: Պեկինում (օլիմպիադա - 2008) առաջին անգամ սամբոն կներկայացվի ցուցադրական ելույթներով:

Բնիկ սպիտակցի Հ. Վարդանյանը պարել է սարսափելի երկրաշարժ: Փլատակների տակ մնացին նրա հարազատների շատերը:

- Ռոստովի փրկարարների հետ ես փնտրում էի իմ մարզիչ Կարապետյանի ընտանիքը: Զոհվեցին երեք եղբայրներ՝ ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ, միջազգային կարգի և ԽՍՀՄ սպորտի վարպետ, կանայք և երեխաները՝ ընդամենը 9 մարդ: Այժմ մենք ամեն տարի ողբերգական այս օրերին Սպիտակում Կարապետյան եղ-



բայրների հիշատակին կազմակերպում ենք սամբոյի հուշամրցաշար: Այս մարզիչների գործը շարունակվում ենք նրանց կրտսեր եղբոր՝ Համլետի հետ, Դոնի հողի վրա: Հայկական այս փոքր քաղաքում մինչև օրս էլ հիշում և հարգում են ռուս ժողովրդի օգնությունը, - ասում է Հ. Վարդանյանը:

Ի նշան երախտագիտության՝ Վարդանյանը որոշեց հուշարձան կառուցել Վոլգադոնի ահաբեկության զոհերի հիշատակին: Հայաստանում գտավ հմուտ քարագործ վարպետներ և տուֆից հուշարձան պատվիրեց: «16 սեպտեմբերի, 1999թ. զոհերի հիշատակին: Աշխարհի բոլոր հայերից: Նախաձեռնող Հապետ Վարդանյան» - մակագրությամբ: Ռոստովի և Նովոչերկասկի արքեպիսկոպոս Պանտելեիմոնը անձամբ է օժել հուշարձանը:

Գավաթի մասին երազանք
1998-ից սկսած Հապետը սպորտ է Ռոստովում: Նրա հնգամյա որդին՝ Մարատը, դեռ զգում է մանկապարտեզ: Բայց արդեն սամբո է պարապում մոդ մարզակումբում: Նա 200 անգամից ավել ձգում վարժություն է կատարում հատակի վրա:

- Ի՞նչ պակաս ապագա չեմպիոն է, - հպարտանում է հայրը: Իսկ փոքրիկ Տիգրանին՝ ապագա սամբիստի մեկ տարին բոլորեց «Ռոսարմ»-ի բացման օրը: Խորհրդանշական է:

Վերջերս ՌՂ նախագահի սամբոյի գավաթի խաղարկման ժամանակ Սպորտկոմիտեի նախագահ Վ. Ֆետիսովը և սամբոյի եվրոպական և միջազգային ֆեդերացիայի ղեկավարությունը Հ. Վարդանյանին հանձնեցին մեդալ՝ Ռուսաստանում սպորտի այդ ձևի զարգացման գործում մատուցած ծառայությունների համար:

- Ես երազում եմ մեր քաղաքում անցկացնել սամբոյի Ռոստովի նահանգապետի գավաթի համառուսական մրցաշար և այն դարձնել ավանդական: Ռուսաստանի ֆեդերացիայի ղեկավարությունը խոստանում է այն ընդգրկել օրացուցային պլանի մեջ, պահանջվում է միայն նահանգապետ Վ. Չուբի համաձայնությունը: Այս մրցաշարը կարևոր է դառնում սամբոյի մասսայական զարգացման համար, - գտնում է Հ. Վարդանյանը:

Սամբոյի մարզային ֆեդերացիայի գրասենյակում կան երկու պետությունների նախագահների լուսանկարները: ՌԴ նախագահ Վ. Պուտինը և ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը զրուցում են թեյի սեղանի շուրջ:

Հ. Կոխարենկո
Вечерний Ростов
N 249, 26 ноября, 2007г.



Սերյոժա Ավագյան
զ. Լեռնանցք

ՄՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔԸ

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի հյուսիսային շրջաններում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը հետագայում անվանվեց Սպիտակի երկրաշարժ: Երկրաշարժից եղան զանգվածային փլուզումներ, մարդկային զոհերը հասան տասնյակ հազարների: Սպիտակի երկրաշարժը տեղի է ունեցել Փոքր Կովկասի բարձրավանդակում՝ գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի առանցքից մոտավորապես 150 կմ դեպի հարավ: Փոքր Կովկասի տեկտոնական և երկրաբանական կառուցվածքային ուղղությունները զուգահեռ են գլխավոր՝ Կովկասյան շղթային հյուսիս-արևմտյան, հարավ-արևելյան ուղղությամբ: Տեկտոնական դրույթը հիմնականում բարդ է, բայց ընդհանուր առմամբ, այն բնորոշվում է երկրի կեղևի սեղմվածությամբ: Սպիտակի երկրաշարժը սկսվել է 1988 թ. դեկտեմբերի 7-ին, Գրինվիչի ժամանակով ժամը 7 անց 41 րոպե 22,7 վայրկյան (տեղական

ժամանակով 11 անց 41 րոպե 22,7 վրկ.), էպիկենտրոնը՝ սարքերի գրանցումների տվյալներով, ունի հետևյալ կոորդինատները, լայնությունը՝ 40092, երկարությունը՝ 44023: Հիպոկենտրոնի խորությունը, ըստ տարբեր մեթոդների և մոտեցումների, տարբեր է, սկսած 2,5 կմ-ից մինչև 10-15 կմ: Դա բնական է, քանի որ օջախը, որպես տարածական, երկրաբանական մարմին, Ձորաշեն-Հավալար հատվածում դուրս է եկել երկրի մակերես, իսկ ընդերքում տարածվել է ամենաքիչը մինչև 15-20 կմ խորությամբ: Երկրաշարժի մագնիտուդը կազմել է 7,0, իսկ անջատված էներգիան հավասար էր 1016 Ջոուլի: Ուժգունությունն էպիկենտրոնում գնահատվում է 10 բալ: Սպիտակի երկրաշարժը պատկանում է, այսպես կոչված լրիվ ցիկլի երկրաշարժերին՝ նախացնումներ, երկրաբանական ցնցում, հետցնցում: Բավական ուժեղ նախացնումները (ֆորշոկ) եղել են 1988 թ. դեկտեմբերի 3-ին (մեկ) և 6-ին (երեք): Դրանցից առավել ուժեղը՝ մոտ 5 բալ ուժգունության, տեղի է ունեցել դեկտեմբերի 6-ին, երեկոյան ժամը 7 անց 27-ին: Հիմնական սեյսմիկ իրադարձությունը կազմված է եղել երեք տարբեր ցնցումներից 5 և 14 վրկ: ընդմիջումներով (45 վայրկյանի ընթացքում իրար հա-

ջորդող երեք տարբեր երկրաշարժեր): Առաջին ցնցումը հիմնովին ավերել է Սպիտակ քաղաքը և շրջակա գյուղերը: Երկրորդ ցնցումը, որը սկսվել է առաջինից 5 վայրկյան հետո, եղել է ամենաթույլը և ամենաճանաչվածը (մինչև 5 կմ հիպոկենտրոնի խորությամբ): Այն տեղի է ունեցել Հավալար գյուղի մոտ, Վանաձորից ոչ հեռու: Այս ցնցումից և 15 վրկ. անց Ձորաշենի մոտ սկսվել է երրորդ, ամենուժեղ և ամենախոր (10-15 կմ) ցնցումը, որը և եղավ Գյումրիի ու Ստեփանավանի ավերման հիմնական պատճառ (քանի որ մոտ էր գտնվում ցրանց): Առաջին ուժեղ հետցնցումը եղել է հիմնական ցնցումից 4 րոպե 20 վրկ. հետո: Հետցնցումները շարունակվում են առ այսօր: Վերջին տարիներին դրանց հաճախականությունը նվազել է, բայց այդ մարումը խիստ օրինաչափ չի ընթացել: Խոսքը վերաբերում է ինչպես հետցնցումների քանակին, այնպես էլ ուժգնությանը: Այսպիսով, 1988 թ. Սպիտակի երկրաշարժը առաջին հերթին առանձնանում է բազմաստիճան (մուլտիպլետ) բնույթով, երկար ժամանակամիջոցում փոքր ընդմիջումներով եղել է երեք ուժեղ ցնցում: Երկրաշարժի ժամանակ առաջացել են բազմաթիվ և բազմաբնույթ, նաև խոշոր չափի սեյս-

մադիսկոպիզացիաներ, որոնցից մասնագիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկուսը՝ սեյսմատեկտոնական խզումը և խոշոր սեյսմագրավիտացիոն առաջացումները: Սեյսմատեկտոնական կամ գլխավոր խզումն ունի 35 կմ երկարություն և ձգվում է հյուսիս-արևմտյան ուղղությամբ՝ Գուգարքի տարածաշրջանի Հավալար գյուղից մինչև Աշոցքի Գետիկ գյուղի ավերակները: Խզման հարթությունը անկում է դեպի հյուսիս-արևելք մոտավորապես 30-60°: Հիմնական խզումը, ըստ կինեմատիկ բնութագրի, որոշվում է որպես վերնետկողաշարժ: Այս խզումը հատում է Սպիտակ-Երևան և Սպիտակ-Գյումրի ավտոմայրուղիները, ինչպես նաև Վանաձոր-Գյումրի երկաթգծը: Հատման տեղամասերում հստակորեն երևում է խզումը և կարելի է որոշել նրա որոշ պարամետրերը: Սեյսմագրավիտացիոն առաջացումները գտնվում են Աշոցքի Ձորաշեն գյուղի դիմաց՝ Մեծ Ծմակ լեռան լանջերին, Գետիկի աջ ափին: Տեղանքում այս ձևափոխություններն առաջին հերթին աչքի են ընկնում իրենց առեղի չափերով և հսկայական լեռնային զանգվածների տեղաշարժով: Սրանց առաջացումը պայմանավորված է ինչպես սեյսմիկ, այնպես էլ երկրի չափերով, 15-



20 մ խորությամբ, որով մոտ 2 մլն տոննա զանգվածը 30-50 մ շարժված է 10-150 քեթրությամբ լանջերով: Այս ամենը խոսում է այն մասին, որ սեյսմագրավիտացիոն առաջացումների տեղամասը վերջին ամենաուժեղ ցնցման էպիկենտրոնն է: Սպիտակի երկրաշարժից հետո էպիկենտրոնային գոտին ուսումնասիրելիս հայտնաբերեցին հին սեյսմադիսկոպիզացիաներ, որոնք շատ մոտ են տեղադրված նոր առաջացած սեյսմատեկտոնական խզմանը և ձգվում են նրան զուգահեռ: Սա վկայում է, որ այստեղ անցյալում ևս եղել են ուժեղ երկրաշարժեր:



ՀԱՅԱՍՏԱՆ ՏԱՏԻ ԴԺՎԱՐ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ցացրեց փոքրիկներին հայեցի դաստիարակությանը, հայկական ընտանիքի ավանդություններով ու բարոյականությամբ: Նրա թոռները աշխատասեր են, ընտանիքատեր, ծնողատեր, ընկերատեր, համերաշխ, հարգում են մեծերին, օգնում են փոքրերին և թույլերին, օրինակելի են բոլոր կողմերով: Նրանք արդեն մեծ են և հոգում են իրենց ընտանիքի հոգալը:

Հայտնի է, որ մեր կյանքը հեշտ չի ընթացել և դիմագրավել, հաղթահարել այդ ամենը մեն-մենակ կնոջ համար, որը պահում էր երեք մանկահասակ երեխաների և երկու ծերերի, լեզունդար աշխատանք է պահանջել, անկոտրում կամք և անձնագոհություն:

Նա գյուղացիական մեծ տնտեսություն հիմնեց, մշակում է երկու հողաբաժին հողամաս, պահում է անասուններ, որտեղ կատարում է և՛ տղամարդու, և՛ կնոջ աշխատանքները՝ ցանում է, հիմնում գերանդիով, բաժնում է, բարձում է ալյն, և այլն, մինչև հիմա էլ շատ բաներ դարձյալ ինքն է անում:

Սկի հայ կինը, որը կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները: Հայաստան տատիկի նպատակները կատարվել են և շարունակվում են կատարվել: Գոհարիկն ամուսնացել է սիրած երիտասարդի հետ, ունի երկու տղա զավակներ, ապրում է երջանիկ՝ տատիկ հարևանությամբ: Ռոստոմը ծառայել է Հայոց բանակում, վերադարձել է, նույնպես ամուսնացել է մի արժանապատիվ օրիորդի՝ Հայկանուշի հետ, որը մասնագիտությամբ մանկավարժ է, ունեն մեկ աղջիկ, ապրում են երջանիկ, Մաքսիմիկը ծառայել է Հայոց բանակում, վերադարձել է, այժմ սովորում է Երևանի պետական ծառայողական համալսարանում, հեռակա, որպեսզի կարողանա նաև աշխատել և բեթասցնել ընտանիքի հոգալը: Մինչև այժմ Հայաստան տատիկ ընտանիքը բնակվում է տնակային պայմաններում, փոքրահասակ երեխայի հետ միասին: Նրանց հատկացված տունը կիսակառուց է և բնակելի չէ:

Նրանք այժմ իրենց ուժերով կատարում են կիսակառուցյալ տան մերթին հարդարման աշխատանքները: - Հենց որ վերջացնեք տան հարդարումն ու կախավորումը, Մաքսիմիկին էլ կամուսնացնենք,- ասում է Հայաստան տատը:

Եվ համոզված ենք, որ իր ողջ կյանքն ու երթուղին թողնելով նվիրած լեզունդար հայ կինը՝ Հայաստան վարդապետը Աստուծո օգնությամբ կիրառորժի իր այս բաղձանքը ևս: Երազանքը ի կատար:

Ալինա Հովհաննիսյան

ԳՆԱՀԱՏՎԵՑ ՎԱՍՏԱԿԸ

13 տարի առաջ Վանաձորում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ի օրհնությամբ և Վանաձորի Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 1 կրթահամալիրի գլխավոր տնօրեն Գագիկ Աթաբեկյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Մաշտոց» կրթա-մշակութային կենտրոնը՝ հասարակական կազմակերպություն, որն իր ծանրակշիռ նպաստն է բերում հայ մշակույթի, գիտության և կրթության զարգացմանը: Կազմակերպությունը լույս է ընծայում նույնանուն հանդեսը, որն իր նայրենականաստ առաքելությամբ կարևոր դերակատարություն ունի մեր երկրի հասարակական, կրթամշակութային, քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրների մեկնաբանման և դրանց լուծումների որոնման գործում:

Երբ հետադարձ հայացք են գցում կազմակերպության անցած ուղու, ուղղակի լցվում են հպարտությամբ ու երախտիքի զգացումով այն մարդկանց ու աշխատանքի նկատմամբ, ինչը կոչվում է ինքնանվիրում և հայրենամիլեր գործ:

Կազմակերպության ձեռքբերումների շարքում պետք է դասել նաև նրա կողմից հիմնադրված «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալը, որը շնորհվել է շնորհվում է այնպիսի մարդկանց, որոնցից յուրաքանչյուրն իր բնագավառում մի անխոչը մշակ ու հե-

նասյուն է: Իսկ պարգևատրվածների շարքում են պատկառելի հոգևորականներ, պետական այրեր, գրողներ, արվեստի և մշակույթի գործիչներ: Թվարկենք պարգևատրվածներից մի քանիսին՝ Ամենայն հայոց կաթողիկոս, երջանկապետ Վազգեն Ա-ն (նա պարգևատրվել է թիվ 1 մեդալով), հայ առաքելական եկեղեցու Արարատյան թեմի կաթողիկոսական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կոնյանը, ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Դարսամյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Զուլյանը, ՀՀ ԱԺ մշակույթի, կրթության, գիտության, սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրամուշ Հակոբյանը, Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գևորգյանը, ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կասարյանը, տաղանդավոր բանաստեղծ Հրայր Սարուխանը, բանաստեղծ Հովհիկ Հովնյանը, դրամատուրգ, լրագրող Կարինե Խոդիկյանը, սփյուռքահայ բանաստեղծուհի Անուշ Նազարյանը, գրող Վահագն Մուրզեցյանը, ՀՀ վաստակավոր նկարիչ Վալմարը, գեղանկարիչ, ՎՊՄԻ արվեստի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գեորգի Թովմասյանը, գեղանկարիչներ խաչիկ Դարաբեկյանը, Հրայր Գրիգորյանը, աշուղ Ռազմա Սասունցի, շվեյցարական «Կարիտաս»

բարեգործական կազմակերպության հայաստանյան ներակայացուցչության գլխավոր Գուլյո Կապելին և ուրիշ արժանավորներ: «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնը հասարակական կազմակերպության նախագահության որոշմամբ «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալով պարգևատրվել է նաև «Թային աշխարհ» անկախ շաբաթաթերթի բազմակատակ զլխավոր խմբագիր Համլետ Խաչատրյանը: Նա բառատուր օտարի շարունակ հայրենի լրագրության անդաստանում գրի հանդեպ իր անպարփակ սիրով, նվիրվածությամբ ու հավատարմությամբ դարձել է իր գյուղաշխարհի մարդկանց խոսքի, հույզերի, ապրումների ու խորհուրդների թարգմանը և այսօր էլ նույն վստահությամբ շարունակում է լրագրողի իր առաքելությունը: Վերջերս Երևանի «Արմենիա-Մարիոք» հյուրանոցի «Թագուհի Զաբել» սրահում «Մաշտոց» կրթամշակութային հյ Նախագահ Գագիկ Աթաբեկյանը, նախագահության անդամներ Կարինե Խոդիկյանը, Գեորգի Թովմասյանը, Կարինե Խոդիկյանը, Ռոստոմը և այլքանքալոր պայմաններում «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալը հանձնեցին Համլետ Խաչատրյանին: **Սեփական լրատվություն**

ԱՅՍԵՂ ՄԵՋ ՄՊԱՍԱՐԿՈՒԲ ԵՆ ԲԱՐԵԽԻՂԸ ԵՎ ԲԱՐԵՆԱՄԲՈՒՅԻ...

Սպիտակի տարածքային հարկային տեսչության սպասարկման բաժնի, նրա բարեխիղճ պետի՝ Արմենուհի Զարգարյանի և աշխատակիցների անխնայ, որ ցանկանում ենք պատմել մեր այս փոքրիկ ակնարկում:

Բաժնի այցելուները հիմնականում հարկատուներն են՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Սպասարկման բաժնի կատարում է հետևյալ գործառնությունները՝

- հարկ վճարողների հաշվառում,
- հարկ վճարողների կողմից ներկայացված հարկային հաշվարկների, հայտարարագրերի, հաշվապահական հաշվետվությունների և հարկային պարտավորությունների հետ կապված այլ փաստաթղթերի ընդունում:

Պետնեղստրում գրանցվելուց հետո հարկատուներն ամսական ընթացքում ներկայանում է հարկային տեսչու-

թյան սպասարկման բաժնի: Բաժնում նրան տրամադրվում է հաշվառման համարը կամ կոդը և տրվում են համապատասխան ցուցումներ հետագա գործողությունների համար, դրանով իսկ հարկատուն ամեն օրն էլ բաժնի աշխատակիցների հետ՝ արժանապատիվ նրանց բարյացկամ և բարեհամբույր վերաբերմունքին: Այցելուները սպասարկվում են պատշաճ ձևով ու մակարակով, ոչ մի բաշխուղ չի առաջանում, ոչ մեկի ժամանակը ավելորդ չի կորչում, հաշված ռոպեների ընթացքում ձևակերպվում են փաստաթղթեր, շատ մատչելի մեթոդներով տրվում են համապատասխան խորհրդատվություն ու ցուցումներ: Նրանց վերաբերմունքից ջերմանում ու պայծառանում են նույնիսկ ամենամաշակված դեմքով այցելուները: Սկի այս պատճառով էլ ցանկանում ենք դրվատել և շնորհակալական խոսք ասել այդ համերաշխ,

պարտաճանաչ կոլեկտիվի բոլոր անդամներին՝ բաժնի պետ Արմենուհի Զարգարյանին, աշխատակիցներ՝ Աղվինա Խաչատրյանին, Մարինե Կոստանյանին, Սիրվարդ Մարույթյանին, Տաթևիկ Այվազյանին, Սելինե Գրիգորյանին, Կարինե Խաչիկյանին, Ալինա Ավետիսյանին, Հովհիկ Այվազյանին: Ընդունակություն և բարին ընդ ձեզ, լավ մարդիկ: Բաժնի աշխատակիցներին հղում ենք այս չափածո մաթթանքը:

Դուք հայ օջախի և զավակ, և մայր, Ռունը և լուրջ գործ և լուրջ միջավայր, Կերտողներից եք դուք մեր նոր կյանքի և նոր հարություն, Չոր արժեքավոր լուսանց ներդրեք գործին հանրության, Չեզ առողջություն և հաջողություն ենք մաթթում անսահման:

Ալինա Հովհաննիսյան

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՍՏԵՓԱՆ ԺԱԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ու բախվում անակնկալ գույժին: Անհնար է հավատալ, որ մեր ապրելիք կյանքի ընթացքում Ստեփան Բաղդասարյանը ժամանակի ու տարածության այդ հատվածը չի լցնելու իր ներկայությամբ, իր տաղանդներով, իր խռովքով, կյանքի նկատմամբ ունեցած իր մեծ սիրով: Ստեփանը ինքնամոռաց ու անձնագոհության աստիճան նվիրված էր աշխատանքին ու կյանքի ճշմարտությունների բացահայտմանը: Ստեփանը իր դավանած սկզբունքներով ոչ միայն դարձավ բարության, ազնվության, պարկեշտության, համեստության և աշխատասիրության խորհրդանիշ, այլև դարձավ մարդկային կատարելության տիպար: Դարձավ հայրենասիրաբան խորհրդանշան իր ծնողների, իր կնոջ ու իր գավակների, իր գործին ու հիշատակին նվիրված ընկերների, զինվորական գործիչների, պետական այրերի և բազում այլ մարդկանց համար:

Փետրվարի 3-ի ուշ երեկոյան անհեթեթ պատահարի զոհ դարձավ Լոռու և Տավուշի մարզերի ռազմական հակահետախուզության պետ, գնդապետ, 47-ամյա Ստեփան Ժակի Բաղդասարյանը: Ստեփանը արմատներով Արևաշողից էր: Նրա անսպասելի մահվան գույժը կայծակնահար կաղնու շառաչի նման մեծ արագությամբ տարածվեց հայրոց աշխարհում, հասավ Ղարաբաղ, արտերկիր և ցնցեց բոլոր նրանց հոգիները, ովքեր ճանաչում էին Ստեփանին: Նրա կորստյան ցավն անասելի է, և մարդիկ Ստեփանի վաղաժամ կորստի անպատմելի ծանրությունից կորացել և ցավից քարացել են: Ասես ողբավանդային երգ է: Ոչ ոք չի հավատում: Միխայիլի խոսքերն անիմաստ են, բառերն անգամ անգործ են անդամալի կորստի չափը ներկայացնելու համար:

Տարածված էր ասելը, որ կյանքը մեզ տալու է մեզ ցանկացած իր բաղձալի մարտի համար: Ստեփանի հետերկրային կյանքի ճանապարհը պետք է շարունակվի անբեկ ու անսայթաք ընթացքով, միշտ ու մշտապես քերականությամբ, շիտակությամբ ու ուղղամտությամբ, ինչպես որ իր ապրած կյանքն էր:

Կենսուրախ, լավատես, ոգեղեն, վառ լիցքերի տեր այս անչափ խիզախ մարդու հոգին լեցուն էր բարության, ազնվության մեջ: Ոգեկոչելով նրա կերպարը նախ և առաջ պետք է տեսնենք հայրենասեր ու ազգասեր, ծնողասեր ու որդեսեր, ընկերասեր մարդուն, հարազատների ու շրջապատի նկատմամբ ծայրաստիճան ուշադիր մարդուն: Ստեփանը ապրեց շունչով, բեղուն ու բովանդակալից, նվիրյալ զինվորականի կյանքով: Նրա ամեն մի օրվանից հույս ու հավատ էր ճառագում. նա մեր հավատի խոշոր սյունն էր:

Սարսափելի է մտածել, որ այլևս մեզ հետ չէ Ստեփանը, մեր Ստեփանը: Ծակատագիրը, իրոք, դաժան էր, բայց և մահն անգործ և անմահության դեմ, իսկ Ստեփանը իր բարի ամուսնով դասավելու է անմահների շարքում: Նա իրեն ճանաչողների շրջանում թողել է բարի անուն: Նրա արդար հիշատակը մշտապես ապրելու է այն մարդկանց հիշողություններում, ովքեր տարիներ շարունակ եղել են նրա կողքին, շփվել նրա լուսավոր, բարի, անհիշաչար, կամեցող նկարագրի հետ, վայելել նրա մարդկային վերաբերմունքը:


Օրինյալ լինի Ստեփան Բաղդասարյանի պայծառ հիշատակը, օրինյալ լինի մշտախոյով ժամանակի ու հավերժի մեջ: Ամեն:

Ֆահրադ Ափուջանյան

ՖՐՈՒՆԶԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հագիվ 60-ը բուրբ, կարճատև հիվանդությունից հետո, անսպասելիորեն Ամանորի նախաշեմին կյանքից անժամանակ հեռացավ վաստակաշատ ինժեներ-շինարար **Ֆրունզիկ Վլադիմիրի Բաղդասարյանը**:

Ֆ. Բաղդասարյանը ծնվել է Արևաշողում: Հայրը, որին մտերմաբար անվանել են Լադո, եղել է շնորհաշատ անձնավորություն, քանդակներ է կերտել և նկարներ արարել, կյանքից հեռացել է երիտասարդ տարիքում և ընտանիքը՝ կինն ու երկու որդիները մինչև անասհամալիրում «վայելել» են կյանքի «պարզագույն» դառնությունները: Որբացած ընտանիքի համար շրջադարձային դարձավ վաճառորդ տեղափոխվելը, որտեղ էլ սովալլուկ պատանին հաճախեց գիշերօթիկ դպրոց, որը դարձավ նրա անհատականության ու աշխարհայացքի ձևավորման իսկական դարբենը: Գիշերօթիկում դասերին զուգահեռ մասնակցեց փոլային գործիքների և կրթատաների խմբակների պարսպարկերներին, դարձավ երաժիշտ ու մարմնամարզիկ: Կարճատև հրաշալի սերնեմաղներ էր նվագում: Ուներ ատլետիկ ու պինդ կազմվածք: Ավարտեց միջնակարգ ու ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ, ստացավ ինժեներ-շինարարի կոչում: Ծառայեց խորհրդային բանակում: Նա արդեն 30 տարի աշխատում էր շինարարի մասնագիտությամբ, անցնելով աշխույժից մինչև շինարարական վարչության պետի ու շինիտեղի ձեռնարկության տնօրենի ժամանակաշրջանը: Վաճառորդ քաղաքի բազմաթիվ բնակելիներ ու հասարակական նշանակության շենքեր վեր են խոյա-



ցել նրա ղեկավարությամբ աշխատող շինարարական կազմակերպությունների միջոցով: Այսօր էլ վաճառորդների և մարզի գրասեր հասարակության համար սրբատեղի է դարձել նրա կառուցած մարզային կենտրոնական գրադարանը: Նա ակտիվորեն մասնակցել է նաև երկրաշարժից վերականգնման աշխատանքներին՝ աշխատելով Քարածորում գործող ՀԱՇ-ի պետ: Ֆրունզիկը աչքի էր ընկնում ազնվությամբ ու պարզությամբ, զուսպ էր, գրեթե քաղաք, նրա զգացմունքները և ինքնասիրության մեջ իմաստ, հոգի, խոսք, սեր, գործ ու ասելիք կար:

Նա եղավ սիրեցյալ ամուսին, իր երեք դուստրերի նվիրյալ հայրը, իր ընկերների հոգին: Եկավ ու գնաց՝ ապրողների թողնելով իր բարի անունը: Նրան բարություն կհիշեն հարազատները, իր հետ աշխատած մարդիկ, ընկերներն ու ծանոթները:

Ֆահրադ Ափուջանյան

սկիզբը 1-ին էջում

ԱՆՑ ԱՌԱՔԵԼԱՎԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԶՐՕՐԿՆՅԱՑ ԽԱՆԶԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաչքավորների նվիրումը եկեղեցուն պայմանավորված է նրանց անվերապահ գիտակցված հավատքով ու նախանձախնդրությամբ, որ ուխտագրությամբ է պայմանավորված, և որը դրսևորվում է բարեգործությամբ ու մարդասիրական արդար գործերով: Խաչքավորներն իրենց օրինակելի վարքով հասարակության մեջ նպաստում և քաջաբերում են եկեղեցավորությունն ու անշահախնդիր, անկողմնակալ բարեգործությունը՝ անսակարկելի ու առանց ակնկալի: Այս հանգամանքը խաչքավորներն իրենց եկեղեցական պարտականությունից դուրս չեն շահարկում կամ ծառայեցնում այլ նպատակների համար:

Երեսնամյա ժողովուրդը, ուստի յուրաքանչյուր ոք պետք է նախանձախնդիր լինի դրա պահպանմանն ու զորացմանը:

- Արքայան Հայր, պարտադիր է խաչքավորությանը պայմանավորել եկեղեցուն աջակցելը:

Բոլորովին նախապայման չէ եկեղեցուն և կամ նրա ծրագրերին օգնելու, աջակցելու համար խաչքավոր լինելը: Մենք մեր համայնքներում ունենք գիտակից ու եկեղեցասեր շինարարներ, իշխանավորներ, գործարարներ, գիտության ու մշակույթի, առողջապահության, իրավապահ և այլ ոլորտներից հայրերի, ուղեք, ըստ հնարավորության, ինքնաբերաբար նվիրումով իրենց աջակցությունն ու մասնակցությունն են բերում մեր բոլոր ծրագրերին: Հատկապես հիշատակության արժանի են մեր քարոզչական, ճամբարային ծրագրերին նրանց համեստ, սակայն ի սրտե ցուցաբերվող աջակցություններն ու նվիրատվությունները:

- Արքայան Հայր, Ձեր խոսքը և գնահատականը մեր խաչքավորներին:

Չանուն հոգևոր դասի և հավատացյալների մեր երախտագիտությունն ենք հայտնում մեր բոլոր խաչքավորներին անցող տարիներին իրենց ազնիվ, անմեջցորդ ու բարի աջակցություններով Մայր եկեղեցու հոգևոր և ազգային կյանքին մասնակցելու և սատարելու համար: Անկախ աջակցության չափից, ձևից ու քանակից, խաչքավոր, բարերար թե պարզ ու համեստ բարեպաշտ աղոթող՝ անզանահատելի է նրանց վերաբերմունքն ու նվիրումը: Մենք հարգում, գնահատում և օրհնում ենք բոլորին և աղոթում, որ յուրաքանչյուր հայ մարդու մեջ արմատավորվի եկեղեցուն և միմյանց փոխօգնության աստվածահաճու կենցաղավարությունը: Եթե ուզում ենք ազգովին լավ ապրել ու հզորանալ, ուրեմն միմյանց ու մեր եկեղեցիներին պետք է օգնենք և սիրով շաղկապվենք:

Խաչքավորները պարտադիր ներկա են գտնվում հինգ տաղավար տոներին՝ եկեղեցու դասում իրենց հատկացված պատվավոր տեղում, խոստովանությանը հաղորդություն են ստանում:

- Արքայան Հայր, անցող տարիներին Ձեր սկզբունքայնության շնորհիվ խաչքավորի գրեթե մոռացված հանգամանքը, ինչպես նաև այլ կրոնական-եկեղեցական շատ ավանդույթներ կրկին վերարժևորվեցին և արդիական ու սիրելի դարձան: Որքանով էք դուք կարևորում և ի՞նչ նշանակություն ունի այդ ամենը մեր ժողովրդի ու եկեղեցու համար:

Խաչքավորությանը և եկեղեցական այլ կարգ ու կանոններ վերաբերվող հարցերի շուրջ սկզբունքայնությունը պայմանավորված է եկեղեցու պահանջներից: Թեման հոգևոր կյանքին նպաստող կանոնական, ծիսական, վարչական ավանդությունները եկեղեցու հզորացմանը նպաստող կարևորագույն նախապայմաններն են:

Խաչքավորության այս հնամենի ու գեղեցիկ ավանդությունը մեր թեման կյանքի է կոչվում նորակառույց կամ վերականգնված եկեղեցիների շուրջ համախառնված համայնքներում ևս:

Նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ եկեղեցին բոլորիս սրբու-

«Լուսարձակ» թերթի խմբագրակազմը վշտացած է և ցավակցում է Ֆահրադ Ափուջանյանին՝ նրա սիրելի **Ստեփան Ժակի Բաղդասարյանի** վաղաժամ մահվան առթիվ:

Գագիկ Սիսակյանը վշտացած է **Ստեփան Ժակի Բաղդասարյանի** վաղաժամ մահվան առթիվ և ցավակցում է հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

Նորիկ և Հայկ Մխիթարյանները վշտացած են **Ստեփան Ժակի Բաղդասարյանի** վաղաժամ մահվան առթիվ և ցավակցում են հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

Միշա և Վահագն Պապիկյանները վշտացած են **Ստեփան Ժակի Բաղդասարյանի** վաղաժամ մահվան առթիվ և ցավակցում են հանգուցյալի մերձավորներին ու հարազատներին:

Գլխավոր խմբագիր՝ ՖԱՐՈՒԴ ԱՓՈՒՋԱՆՅԱՆ
 Խմբ. հասցեն՝
 ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան փող. 7/23,
 հեռ. 2-30-38, 2-35-38
 Ստորագրված է տպագրության 12.02.2008թ.

Համարի թողարկման պատասխանատու՝
Ֆ. ԱՓՈՒՋԱՆՅԱՆ
 Համակերպչային շարվածքը՝ «Լուսարձակ»
 թերթի խմբագրության: Ծավալը՝ 1 տպագր.
 մամուլ:
 Տպագրանակը՝ 900 օրինակ
 Գրանցման վկայական 01U000130

Տպագրվել է «ՄՄ տպագրատուն» ՍՊԸ-ում:
 Վաճառորդ, հեռ.՝ 4-02-29:
 Նյութերը չեն գրախոսվում, չեն վերադարձվում:
 Հեղինակները պատասխանատու են փաստերի
 ճշտության համար:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
 «Ափուջանյան և որդիներ» ՍՊԸ
 ք. Սպիտակ, Ս.Ավետիսյան 7/23: Գրանցման
 վկայական՝ 03 Ա 05 23 38, տրման օրը՝ 05.08.02թ.
 Գինը պայմանագրային: